«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Ինտերակտիվ ուսուցման արդյունավետությունը «Հայոց պատմություն» ուսումնական առարկայի դասագործընթացում 9-րդ դասարանի օրինակով»

Հետազոտող ուսուցիչ՝ **Պետրոսյան Եղիշե Երվանդի**

Ուս. հաստատություն՝ «Ծաղկաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Հրազդան-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն.....
.....2

Ներածություն.....
....3

ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

1.1 Ինտերակտիվ ուսուցման տեսամեթոդական հիմքերը.....6

ԳԼՈՒԽ 2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

2.1 Ինտերակտիվ/ փոխգործուն մեթոդական հնարների կիրառման առանձնահատկությունները «Հայոց պատմություն» ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում 9-րդ դասարանում...11

Եզրակացություններ.....
.....19

Օգտագործված գրականության ցանկ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Անգրագիտությունը ինչ բան էլ ձեռնարկի, կկործանի մարդկային կյանքի ամրությունը»

Մովսես Խորենացի

Այսօր մեր երկրում մեծ թափով իրականացվում են կրթական բարեփոխումներ, որոնց հիմնական նպատակն է համակարգել առկա բոլոր ռեսուրսները՝ տեխնոլոգիական, մեթոդական, մարդկային՝ դրանք ծառայեցնելով կրթական համակարգի արդիականացմանը, որակյալ և աջակցող կրթական միջավայր ունենալուն, ժամանակակից կրթական միտումներին համապատասխանող կրթական համակարգ ձևավորելուն: Ակնհայտ է, որ վերջին

տասնամյակում կրթական բարեփոխումների առանցքում սովորողների՝ իրենց ուսումնառության գործընթացում ունեցած դերի և մասնակցության արժեվորումն է, ինքնուրույն, նախաձեռնող, ստեղծարար ու մտածող սերունդ դաստիարակելու տեսլականը:

Խորհրդային դպրոցի կրթական համակարգը դիտարկելով՝ կարող ենք պնդել, որ այդ կրթական մոդելի պարագայում սովորողն իր գործունեության, ինքնուրույնության դրսևորման, նախասիրությունների մեջ ինչ-որ առումով կաղապարված էր: Փոխվել են ժամանակները, փոխվել է սովորողների մտածողությունը, աշխարհայացքն ու աշխարհընկալումը, ուստի և առանց նորարարական գաղափարների, ժամանակակից կրթական տեխնոլոգիաների, ուսուցման աշակերտակենտրոն մոտեցումների անհնար է դարձել բավարարել մատաղ սերնդի կրթական կարիքները, մոտիվացնել ու ոգևորել նրանց:

Այսօրվա սովորողը, առավել քան երբևէ, մոտիվացման, խրախուսման, ինքնուրույն աշխատանքային գործունեություն կատարելու, նախագծելու, հորինելու, բացահայտելու կարիք ունի, ինչը մեծապես կարելի է պայմանավորել նաև գիտատեխնիկական աննախադեպ զարգացումներով: Թերևս, հենց վերը բերվածով է պայմանավորված կրթական համակարգի արդիականացումն ու թարմացումը՝ մեթոդամանկավարժական պայմանների արդիականացում, կրթության բովանդակության բարելավում, միջազգային օրինակելի փորձի մշտադիտարկում, արդյունավետ կրթական տեխնոլոգիաների տեղայնացում և հարմարեցում: Կարծում ենք, որ նմանօրինակ բարելավման մի արդյունավետ եղանակ է նաև ինտերակտիվ մեթոդների ներդրումը հանրակրթական համակարգում, ինչը թույլ կտա սովորողներին դառնալ ավելի ինքնուրույն, հետաքրքրասեր, նախաձեռնող ու պահանջկոտ: Ստացվում է՝ կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է նաև ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և սովորողի դերի ու գործառույթների ընդարձակում և կարևորում՝ ի դեմս ինտերակտիվ ուսուցման:

Բացառություն չէ նաև «Հայոց պատմություն» առարկայի դասավանդումը, որի շրջանակներում ինտերակտիվ ուսուցման մոտեցումները կարող են խթան դառնալ, որ դասագործընթացը լինի արդյունավետ. սովորողները հնարավորություն կունենան համագործակցելու, միասին հետազոտելու, բացահայտելու, պատմական այս կամ այն իրողության վերաբերյալ կարծիք, դիրքորոշում հայտնելու, պատճառահետևանքային կապեր գտնելու և վերլուծելու՝ ամբողջապես հրաժարվելով մեխանիկական վերարտադրումներից, անգիր արված գրքային տեքստերից, որոնք իրականում որևէ առանցքային նշանակություն չեն ունենում:

<u>Հետազոտության թեմայի արդիականությունը</u>: Թեմայի արդիականությունը պայմանավորված է «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման ընթացքում գիտելիքաստեղծ գործընթացներին զուգահեռ սովորողների մոտ ինքնուրույնության ու նախաձեռնողականության խթանմամբ, մտածողության տարատեսակների զարգացմամբ, թիմային աշխատելու հմտությունների ձևավորմամբ, ինչին մեծապես կարող է օգնել փոխգործուն մեթոդներով պլանավորված դասը:

<u>Հետազոտության նպատակը:</u> Ցույց տալ ուսուցչի կողմից դասի՝ նպատակային, չափորոշչային պահանջներին համապատասխան պլանավորման, կիրառվող մեթոդների և հնարների ճիշտ և թիրախային ընտրության նշանակությունը կրթության որակի բարձրացման և սովորողների առաջադիմության խթանման գործում:

<u>Հետազոտության խնդիրը՝</u>

1. Շեշտադրել ինտերակտիվ ուսուցման արդյունավետությունը սովորողի անկախ, ինքնուրույն գործելու, դասի ընթացքում ստեղծարար մոտեցումներ ցուցաբերելու տեսանկյունից:
2. Մատնանշել աշակերտակենտրոն դասի կարևորությունը՝ որպես կրթության որակի բարձրացման հիմնական նախապայմաններից մեկը, որն արդյունավետ այլընտրանք է ուսուցման ավանդական մոդելին:
3. Հայոց պատմության դասի ժամանակ կարևորել սովորող-սովորող համագործակցությունը, ինչպես նաև ուսուցչի ֆունկցիոնալ դերը՝ սովորողների կոլեկտիվ աշխատանքը կազմակերպելու, ուղղորդելու և վերահսկելու համատեքստում:

<u>Հետազոտության ընթացքում գործադրված մեթոդները՝</u>

1. Գիտամեթոդական գրականության, կրթության բնագավառի իրավական ակտերի ուսումնասիրություն և վերլուծություն
2. Դիտարկումներ, փորձարարական օրվա դասի պլանավորում, արդյունքների վերլուծություն, ամփոփում:

<u>Ուսումնասիրության նորույթը</u> պայմանավորված է «Հայոց պատմություն» ուսումնական առարկայի շրջանակներում ինտերակտիվ ուսուցման մեթոդական կառույցի բազմազանությանն ու արդյունավետությանը միտված մոտեցումների մշակմամբ:

<u>Ուսումնասիրության վարկածը:</u> Դասի պլանավորման ավանդական մոդելն այլևս արդյունավետ չէ, ունակ չէ ապահովել սովորողների առաջադիմությունն ու սովորելու մոտիվացիան: Ի հակադրություն դրա՝ բավականին օգտավետ է ինտերակտիվ ուսուցումը, որը կարող է ոգևորել և դեպի դասն ուղղել սովորողին:

ԳԼՈՒԽ 1

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

1.1 Ինտերակտիվ ուսուցման տեսամեթոդական հիմքերը

Մեթոդը հունարեն բառ է (metodos), որ բառացի թարգմանած նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ: Այս եզրը գիտական գրականության մեջ ունի տարաբնույթ բնութագրումներ: Մեթոդը կարելի է մեկնաբանել նաև այսպես՝ որևէ նպատակի հասնելու միջոց, գործիք, կրթության ոլորտում՝ ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեություն, գիտելիքը սովորողին մատուցելու օժանդոկող միջոց՝ ուղղված ուսումնական նպատակների իրականացմանը: Կարելի է ասել, որ ուսուցման մեթոդն ուսումնական գործընթացի միջուկն է, որն իրար է կապում նախապես պլանավորած նպատակը և վերջնարդյունքը: Առանձնացնում ենք դասավանդման «**Պասիվ», «Ակտիվ»** և **«Ինտերակտիվ»** մեթոդները: Պասիվ մեթոդների կիրառման պարագայում ուսուցիչը դասագործընթացի կենտրոնական սուբյեկտն է, ով ղեկավարում է դասը, իսկ սովորողները պասիվ լսողների դերում են /պատկեր *1*/ : Ուսուցիչ-սովորող կապն իրականացվում է հարցումների, թեստային, ստուգողական աշխատանքների միջոցով: Պասիվ մեթոդներով պլանավորված դասագործընթացն իր բնույթով ուսուցչակենտրոն է, ինչը, մեր համոզմամբ, այսօրվա հանրակրթական համակարգում արդյունավետ չէ, ավելին՝ հաճախ չի ապահովում սովորողների կողմից հանրակրթության պետական չափորոշիչով նախատեսված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը: Պասիվ մեթոդներով պլանավորած դասն իր բնույթով կարելի է համարել ավանդական. «Ավանդական դասի ընթացքում սովորողները պասիվ են, հիմնականում լսում են, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի ընթացքում հնարավորություն ունեն հարցեր տալու, կարծիք հայտնելու»[1]:



Պատկեր *1*

Ակտիվ մեթոդների Պարարագայում սովորողներն այլևս պասիվ լսողներ չեն, այլ դասագործընթացի ակտիվ մասնակիցներ, ովքեր կարող են համագործակցել ուսուցչի հետ

[1] Մասնակցային մեթոդներ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020:

/պատկեր 2/: Սովորողը գիտելիք է ստանում տարբեր աղբյուրներից ինֆորմացիայի հավաքագրման, վերլուծման արդյունքում: Ակտիվ ուսուցման մեթոդները սովորելու, ճանաչողական գործունեություն ծավալելու ուղիներն են:



Պատկեր *2*

Իսկ ահա ինտերակտիվ/փոխգործուն մեթոդները կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև, որոնք ապահովում ոչ միայն ուսուցիչ-սովորող, այլև սովորող-սովորող կապ: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցիչը նոր գիտելիքներ փնտրելու իր հանձնարարություններով սովորողներին ուղղորդում է անկախ հետազոտությունների, բացահայտումների կատարմանը /պատկեր 3/:



Պատկեր *3*

Կարելի է պնդել, որ ինտերակտիվ մեթոդներով պլանավորված դասն ամբողջովին համընկնում է կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի տրամաբանությանը. «Ավանդական դասի ընթացքում գործում է ուսուցիչ-աշակերտ կապը, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասին՝ նաև աշակերտ-աշակերտ կապը»[2]: Փոխգործուն մեթոդներով պլանավորված դասին ուսուցիչը հադես է գալիս ուղղորդողի, կողմնորոշողի, համակարգողի դերում, իսկ սովորողը դասագործընթացի կենտրոնական սուբյեկտն է, ով հետազոտում է, տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրում տեղեկություններ, համակարգում դրանք, գիտելիքները դնում գործնական կիրառության մեջ՝ հնարավորություն ունենալով այդ

[2] «Մասնակցային մոտեցում և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020»:

ամենը կատարել նաև թիմային աշխատանքի միջոցով: Ինտերակտիվ ուսուցումը ենթադրում է երկխոսության միջոցով շփման կազմակերպում և զարգացում, որը նպաստում է փոխհասկացվածությամբ և փոխներգործությամբ յուրաքանչյուրի համար անհատապես կարևոր խնդիրների լուծմանը:[3] Ուսուցչի Գործառույթներ ինտերակտիվ ուսուցման շրջանակներում սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն է, ինչն առաջին հերթին խթանում է վերջիններիս ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը, ինչը օրենքով հանդիսանում է մանկավարժական աշխատողի պաշտոնային պարտականությունը՝ «Ուսուցիչը պետք է սովորողների մեջ զարգացնի ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ»[4]: Միևնույն ժամանակ, դասագործընթացն արդյունավետ և նպատակային կազմակերպելու համար շատ կարևոր են ուսուցչի մասնագիտական ու մարդկային որակները, վերջինիս ակադեմիական գիտելիքների ծավալը, թիրախային մեթոդներ ընտրելու կարողությունները: Աներկբա է, որ ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների ու դասավանդման մեթոդների մասին շատ է խոսվում թե՛ վերապատրաստումների, թե՛ առարկայական մասնախմբերի նիստերի ժամանակ, այնուհանդերձ, իրողություն է, որ շատ ուսուցիչներ նոր մեթոդներ կիրառում են սոսկ ցույց տալու համար, որ կիրառում են, այնինչ ընտրված մեթոդը պետք է ծառայի ուսումնական նյութն առավել դյուրին դարձնելուն, դրա տեղայնավումը դասավանդման ընթացքում չպետք է լինի ինքնանպատակ, այլ ունենա կոնկրետ նպատակներ՝ կոնկրետ խնդիրներ լուծելու համար: Միայն այդ դեպքում ընտրված մեթոդական շղթան կարելի է արդյունավետ համարել: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը[5]:

Մեթոդներն ու հնարները դասապրոցեսում այնպես սահուն պետք է օգտագործվեն, որ դրանք դառանա դասի միսն ու արյունը, սովորողներին ոգևորելու գործիքները: Նման դեպքում ուսուցիչը կարող է խնայել ժամանակ, ապահովել սովորողների համաչափ

---

[3]Ալեքսանյան Լ.,Թոքոսյան Ն.,Պետրոսյան մ.,Ուսուցման ինտերակտիվ մեթոդների տեսությունն ու պրակտիկան, Երևան, 2004, էջ 26:

[4] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 10:

[5] https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, էջ 22:

մասնակցելիությունը դասին, կիրառել շերտավորված ուսուցում՝ հաշվի նստելով յուրաքանչյուր սովորողի կարիքների հետ. «Մանկավարժական աշխատողը պարտավոր է նպաստել երեխայի կրթության իրավունքի իրացմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները»[6]: Կարող ենք պնդել, որ ուսուցչի խնդիրն է նաև ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել կոնկրետ իրավիճակին, իր ունեցած մեթոդական զինանոցից ընտրել համապատասխան մեթոդը՝ ելնելով իրականացվող աշխատանքի նպատակներից:Փոխգործուն մեթոդների կիրառությունը թույլ է տալիս, որ սովորողները անընդհատ լինեն համագործակցության մեջ, երկխոսեն, բանավիճեն, կարծիք ու դիրքորոշում հայտնեն, համատեղ աշխատանքի արդյունքում գտնեն հարցերի պատասխաններն ու գործնական կիրառության մեջ դնեն իրենց տեսական գիտելիքները:Փոխգործուն մեթոդները միևնույն ժամանակ նպաստում են սովորողների մտածողության զարգացմանը, ճանաչողական կարողությունների ձևավորմանը: Այդ մեթոդները զույգերով, խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են, որոնց նպատակն է համատեղ որոնումներ կատարել, ընդհանուր նպատակի համար որոշումների կայացնել ու իրագործել:

Դիտարկենք ինտերակտիվ ուսուցման առանձնահատկությունները.



[6] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 2.2:

Ինչպես վերը նշել էինք, ուսուցման փոխգործուն մեթոդները համապատասխանում են կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթության սկզբունքներին, որոնք բնույթով աշակերտակենտրոն են: Կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթությունն ուղղված է սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերի ուսուցմանը: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից[7]: Կարծում ենք, որ այս համատեքստում տեղին կլինի խոսել նաև ուսուցչի կերպարի, նրա մասնագիտական որակների, դրանք բարելավելուն ուղղված վերջինիս գործողությունների մասին: Անշուշտ, բոլոր ուսուցիչներն էլ կատարում են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրենց պարտականությունները, սակայն պետք է նկատենք, որ ոչ միշտ է գործընթացն իրականացվում արդյունավետ՝ հաշվի առնելով ներքին գնահատման արդյունքները, ՀՀ տեսչական մարմնի կողմից կատարվող ստուգումների արդյունքները: Այդ տեսանկյունից կարևորում եմ առարկայական մեթոդմիավորման աշխատանքը, որը կոչված է կատարելագործելու դասավանդման որակը՝ ապահովելու նոր մեթոդական ձևեր ու միջոցներ, ուսուցիչների մասնագիտական մակարդակի բարձրացման համար ստեղծել պայմաններ, ուստի կարևոր է նաև ուսուցիչների համագործակցությունը, ինտեգրված դասերի, նախագծային աշխատանքների անցկացումը: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է համագործակցել գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով»[8]:

Մանկավարժական մասնագիտական մշակույթը ենթադրում բազմապիսի հատկանիշներ, ինչպիսիք են սերը երեխայի նկատմամբ, նրանց հետ համագործակցելու կարողությունը, հաղորդակցման ժամանակ վերապրվող ուրախությունը, երեխաների հետաքրքրությունների հավատարիմ պաշտպանությունը, արդարամտությունն ու պարկեշտությունը[9]: Սովորող-ուսուցիչ հաղորդակցման միջոցով իրագործվում է սոցիալական, բարոյական,

---

[7] ՀՀԿառավարության՝ 08.04.2010 թվականիթիվ 439-Ն որոշում:

[8] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 2.7:

[9] Հակոբյան Ն., Գևորգյան Ս. և ուրիշներ, Մանկավարժական հաղորդակցում, ուսումնամեթոդական ձեռնարկ, հեղինակային հրատարակություն, Երևան, 2010, 202, էջ 63-64:

մշակութային, գեղագիտական, էկոլոգիական արժեքների փոխանցումն աճող սերնդին: Կարծում ենք, որ փոխգործուն մեթոդներով պլանավորված դասն իսկապես կարող է օգնել ուսուցչին կառավարելի դարձնել սովորողներին, ապահովել համաչափ մասնակցելիություն՝ ի վերջո դասագործընթացը դարձնելով դինամիկ, պատկերավոր և հետաքրքիր:

ԳԼՈՒԽ 2

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

2.1 Ինտերակտիվ/ փոխգործուն մեթոդական հնարների կիրառման առանձնահատկությունները «Հայոց պատմություն» ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում 9-րդ դասարաում

Ամեն մի ժողովրդի պատմություն իր մեջ ամփոփում է տվյալ ժողովրդի անցած ուղին, նրա պատմական հիշողությունը, դարերի ընթացքում նրա ստեղծած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը, պատմական իրադարձությունները, պատմական մարդկանց, կարևոր դեպքերի, հաղթանակների, ձեռքբերումների ու պարտությունների ժամանակագրությունը: Ուստի կարևոր ենք համարում, որ առարկայի ուսուցումը սովորողների համար չդառնա զուտ մեխանիկական վերարտադրություն, այլ վերջիններս հնարավորություն ունենան խորքային ուսումնասիրել պատմական դեպքերն ու իրադարձությունները, վերլուծեն պատմական դեմքերի գործողությունները, գնահատականներ տան, դիրքորոշում և վերաբերմունք ունենան:

«Հայոց պատմություն» առարկայի նպատակը հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևավորումն է: Առարկան նպաստում է պետականակիր գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության խորապատկերում գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը: Հայոց պատմություն առարկային հիմնական դպրոցում սովորողը պետք է՝

1. Հետազոտի հայկական քաղաքակրթության ձևավորման և զարգացման ընթացքը, ձեռքբերումներին ու բացթողումները:
2. Հասկանա պատմական իրադարձությունները, երևույթները, փաստերը, դրանց փոխկապակցվածությունն ու պատճառահետևանքային կապերը:
3. Ցույց տա հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությունը համաշխարհային քաղաքակրթության մեջ:
4. Զարգացնի քննադատական մտածողությունը, հետազոտելու, աղբյուրների հետ աշխատելու, հաղորդակցվելու, վերլուծելու, գնահատելու, հարցադրումներ կատարելու, լսելու, քննարկելու, բանավիճելու, սեփական տեսակետներն ու դիրքորոշումնեևը հիմնավորելու, որոշումներ կայացնելու կարողություններն ու հմտությունները:
5. Ցույց տալ սերունդների կապը պատմության մեջ[10]

«Հայոց պատմություն» ուսումնական առարկան իր առանձնահատկություններով լայն հնարավորություն է տալիս ուսուցչին սովորողին ինքնուրույն ու նախաձեռնողական քայլերի մղելու համար: Այդուհանդերձ, այս պարագայում նույնպես օրախնդիր է մոտիվացնել, ոգևորել սովորողին, ցույց տալ առարկայի կարևորությունն ու գործնական նշանակությունը: Պատմությունն այն առարկան է, որ աշակերտը սիրում է ուսուցչի խոսքով, սակայն նկատենք, որ ժամանակակից սովորողը պետք է նաև տեսնի, շոշափի, կիրառի, վերլուծիև հետազոտի, ուստի հակված ենք պնդել, որ փոխգործուն մեթոդների միջոցով առարկայի դասագործընթացի պլանավորումը մեծ արդյունավետություն կարող է ապահովել սովորողների՝ առարկան սիրելու, հետաքրքրություն ցուցաբերելու տեսանկյունից: Պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցման համար պարտադիր չէ, որ աշակերտները սեփական

[10] https://escs.am/files/files/2020-07-17/a266911a693f809df0b4aa3175b0bcdb.pdf Հանրակրթական «Հայոց պատմություն» առարկայի ուսումնառության հայեցակարգ:

պատմական շարադրանքը մշակելու համար փորձ ունենան վերլուծելու աղբյուրները, մեկնաբանելու վկայությունները և համադրելու տեղեկությունները, սակայն այդպիսի փորձն օգտակար է: Աշակերտների համար շատ ավելի հեշտ կլինի համեմատել և համադրել տարբեր տեսակետները, եթե նրանք սովոր են իրենց հանդիպած ցանկացած աղբյուրի (փաստաթղթեր, տեսանյութեր, աուդիո-նյութեր) նկատմամբ կիրառել վերլուծական որոշակի համակարգ[11]:

Կարծում ենք՝ դասընկերների հետ համատեղ գործունեությունը, ուսումնական նյութերի վերլուծությունը մեծապես կարող է օգնել, որ սովորողների մոտ զարգանա տրամաբանական, քննադատական, վերլուծական մտածողությունը, ինչը կարևոր հանգամանք է պատմական մտածողության ձևավորման համար ևս:

Դասի փուլերի հաջորդականության հստակ ապահովումը, նոր նյութի հաղորդման, ամփոփման կամ ամրապնդման փուլերի ժամանակ փոխգործուն մեթոդների կիրառումը, միջառարկայական ու ներառարկայական կապերի ստեղծումը, ՏՀՏ գործիքների կիրառումը «Հայոց պատմության» դասավանդման շրջանակներում կարող է շահագրգռել անգամ ծույլ ու պասիվ սովորողներին՝դարձնելով դասագործընթացի կենտրոնական սուբյեկտը: Ակնհայտ է, որ ուսուցիչն այս պարագայում խնդիր չի դնի իր առջև սովորողի ուշադրությունը արհեստական կերպով դասին սևեռելու, քանի որ դասի ընթացքն ակտիվ է, ՏՀՏ բաղադրիչը տեղում է, զանազան փոխգործուն մեթոդները կիրառվում են, սովորողները զույգերով կամ խմբերով ակտիվ գործունեության մեջ են, այլ խոսքով՝ ստեղծված են բոլոր նախադրյալները՝ լավագույն արդյունքներ գրանցելու համար:

Կրթական նպատակներին զուգահեռ՝ առարկայի դասավանդման ընթացքում սովորողը, անշուշտ, պետք է լինի նաև ինքնուրույն մտածող, գործող, կշռադատող, վերլուծող ու նախաձեռնող:

Անդրադառնանք 9-րդ դասարանում «Հայոց պատմություն» առարկայի դասավանդմանը՝ փոխգործուն մեթոդական համակարգի օգնությամբ: Նշենք, որ ուսուցման այս ձևը պատահական չենք ընտրել. փորձելով շեշտադրել դասի ժամանակ մասնակից սուբյեկտների փոխադարձ համագործակցության անհրաժեշտությունը՝ ցանկանում ենք ցույց տալ, թե ինչքանով է ինտերակտիվ ուսուցումն արդյունավետ առարկայի դասավանդման շրջանակներում:

[11]Ռ. Ստրադլինգ, «Պատմության դասավանդման բազմատեսակյուն մոտեցումը». ուսուցչի ձեռնարկ,Երևան,2008, էջ 32:

Դասի թեման	**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ 1945-1991 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**
Դասի նպատակը	✔ Սովորողները կուսումնասիրեն խորհրդահայ և սփյուռքահայ գրականության ականավոր ներկայացուցիչների ստեղծագործական ուղին, ստեղծագործություններն ու դրանց թեմատիկ ուղղվածությունը պատմաքաղաքական համատեքստում: ✔ Սովորողները կծանոթանան նշանավոր կերպարվեստագետների, կոմպոզիտորների, թատերական և կինոգործիչների մասնագիտական ուղուն և ստեղծագործություններին: ✔ Կբացահայտեն խորհրդահայ կինոն, ճարտարապետությունը
Վերջնարդյունքներ	**1/**Ուսումնասիրի խորհրդահայ գրականության առանձնահատկությունները 20-րդ դարի կեսերին և 20-րդ դարի վերջին՝ համեմատության մեջ դնելով գեղարվեստական ստեղծագործությունների թեման, ժանրային առանձնահատկությունները, գրաքննությունը: **2/**Բացատրի խորհրդային Հայաստանում և սփյուռքյան հայ համայնքներում մշակույթի զարգացման պայմանները, արժևորի ազգային մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում համեմատի արդի մշակութային ձեռքբերումների հետ: **3/**Գիտակցի ազգային արժեքները պահպանելու, զարգացնելու, հաջորդ սերունդներին փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը: **4/**Դրսևորի հետազոտելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, արտահայտի և հիմնավորի սեփական դիրքորոշումներ ու տեսակետներ:

Կապը ՀՊՉ ի հետ	**Մ1**Գրական հայերենով ստեղծի տարբեր ոճերի և ժանրերի գրավոր և բանավոր խոսք՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնելով դրանք իրավիճակներին: **Մ11.**Առաջադրի հետազոտական հարցադրումներ և վարկածներ, պլանավորի և իրականացնի հետազոտություններ՝ առաջարկելով համապատասխան մեթոդներ և բարելավման եղանակներ: Վերլուծի ստացված տվյալները առկա գիտելիքի և պատկերացումների համատեքստում, կատարի վերացարկումներ և ընդհանրացումներ: **Մ15**.Ստեղծագործաբար և պատասխանատու կերպով կիրառի տեղեկատվական և թվային սարքերը որպես ժամանակակից աշխատանքային գործիք, իսկ համացանցը՝ որպես ուսումնական, համագործակցային և աշխատանքային հարթակ: **Մ41**.Կարևորի իր՝ հայկական և համաշխարհային պատմամշակութային արժեքների ժառանգորդ լինելը և ցուցաբերի պատասխանատու վերաբերմունք դրանց պահպանման գործում:
Դասի խնդիրները	1. Իմանալ և ներկայացնել խորհրդահայ և սփյուռքահայ գրականության ականավոր ներկայացուցիչների ստեղծագործությունները, վերլուծել դրանք: 2. Բացատրել Ստալինյան բռնաճնշումներից հետո խորհրդահայ գրականության զարգացման նախադրյալները: 3. Գնահատել օտարագիր և սփյուռքահայ գրողների դերը Ցեղասպանության հանրայնացման գործում: 4. Ներկայացնել խորհրդահայ նշանավոր քանդակագործների, ճարտարապետների, նկարիչների վաստակը՝ հայկական մշակույթի զարգացման գործում: 5. Ներկայացնել խորհրդահայ կինոյի, թատերարվեստի և երաժշտավեստի լավագույն ներկայացուցիչներին ու նրանց ժառանգությունը՝ համեմատել համաշխարհային մշակույթի մեծանուն արվեստագետների համանման գործերի հետ՝ մատնանշելով համամարդկային արժեքները

Միջառարկայական կապեր.	1. Հայոց լեզու – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում 2. Գրականություն – գրողներ, բանաստեղծներ, ստեղծագործություններ 3. Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ) - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր
Կիրառվող փոխգործուն մեթոդներ	1. «Հինգրոպեանոց շարադրանք» 2. «Խճանկար» 3. «Խմբային քննարկումներ» 4. «Մտագրոհ» 5. «Քառաբաժան»

Աշխուժացնել

Մեկնարկել, ակտիվացնել, բաջալերել

Կողմնորոշել դեպի նպատակ, ուղղորդել

Ուսուցիչը դասանյութի հաղորդմանը նախապատրաստելու համար կկիրառի «Հինգրոպեանոց շարադրանք» փոխգործուն մեթոդը: Սովորողները կբաժանվեն երկու խմբի: Ուսուցիչը գրատախտակին կգրի դասի վերագիրը՝ սովորողներին տալով ժամանակ ներառկայական և միջառարկայական կապերի ապահովմամբ ինքնանդրադարձ կատարել և համախմբել թեմայի շուրջ իրենց նախագիտելիքներն ու բանավոր ներկայացնել: Այսպես կզարգանա նաև սովորողների մետաճանաչողությունը:

Մշակել

Ամրապնդել, ներկայացնել, ապահովել

Կիրառել, փոխանցել

Հաշվի առնելով ուսումնական նյութի լայնույթն ու խորությունը՝ ուսուցիչը նոր նյութի հաղորդման փուլում կկիրառի փոխգործուն «Խճանկար» մեթոդը: Կկազմվեն համագործակցային 4 խմբեր, որոնք կաշխատեն միևնույն թեմայի շուրջ՝ տարբեր ուղղություններով: Աշխատանքի ավարտին բոլոր խմբերի գործունեության արդյունքները կմիավորվեն և խմբային քննարկումների մեթոդով կամփոփվեն: Մեթոդի առանձնահատկությունն այն է, որ սովորողները մեծ պատասխանատվություն կկրեն միմյանց ուսումնառության համար՝ միաժամանակ հանդես գալով և՛ սովորողի, և՛ սովորեցնողի դերում՝ արդյունքում կզարգանա նաև վերջիններիս սովորել սովորելու կարողունակությունը: Աշխատանքի ընթացքում յուրաքանչյուր խումբ կդառնա որևէ ենթաթեմայի փորձագետ: Փորձագետները դասագրքից, համացանցային տեղեկատվական հարթակներից կհավաքեն տեղեկատվություն, կմշակեն և կպատրաստեն ներկայացման: Միևնույն ժամանակ փորձագիտական խմբերը հնարավորություն կունենան մյուս խմբերի անդամներին ներկայացնել իրենց ենթաթեման:

Ամփոփել, Ուրվագծել հեռանկար

Հաջորդիվ ուսումնական թեման ամրապնդելու համար ուսուցիչը կկիրառի «Մտագրոհ» փոխգործուն հնարը: Սովորողները կբաժանվեն փոքր խմբերի և գրատախտակին կգրառեն

բանալի բառեր, հասկացություններ: Խմբերը հնարավորություն կունենան բանալի բառերի շուրջ միմյանց հարցադրումներ հղել / պատկեր *4/:*



Ո՞վ է Վիլյամ Սարոյանը*:*

Ի՞նչ գիտեք «Կարոտի գրականության» մասին*:*

«Քառաբաժան» մեթոդը կարելի է կիրառել շարքերով խմբային աշխատանքի շրջանակներում: Յուրաքանչյուր շարք իր համար կնախապատրաստի թուղթ, որի վրա կպատկերի հետևյալ աղյուսակը՝

Ի՞նչ գիտեինք	Ի՞նչն ենք կարևորում
Ի՞նչ իմացանք	Ի՞նչ հասկացանք

Սովորողները դասի ավարտին կկատարեն փոխադարձ գնահատում, ուսուցիչը կհանձնարարի տնային առաջադրանք՝

Պատրաստել տեսասահիկ կամ հետազոտական աշխատանք ուսումնական թեմայի շուրջ:

Փորձենք համակարգել ինտերակտիվ ուսուցման առավելությունները.

- ✔ Ուսումնական նյութի բազմակողմանի և ավելի խորը ուսումնասիրությունը
- ✔ Սովորողների համատեղ խմբային աշխատանքը հեշտացնում է նյութի ընկալումը
- ✔ Սովորողները հանդես են գալիս և՛ սովորողի, և՛ սովորեցնողի դերում, որն էլ ստիպում է լինել ուշադիր և պատասխանատու
- ✔ Ժամանակի ճիշտ և արդյունավետ օգտագործումը
- ✔ Սովորողների նեջ հաշվետու լինելու կարողություն և անձնական պատասխաատվության ձևավորումը
- ✔ Նյութը ներկայացվում է բազմապիսի ձևերով, ինչն էլ ընկալման և կրկնության բազմաթիվ հնարավորություններ է ընձեռում
- ✔ Մոտիվացիա և հետաքրքրությունների բավարարում
- ✔ Սովորողների համաչափ մասնակցելիություն, նոր նյութի յուրացում

Այսպիսով, կարող ենք պնդել, որ փոխգործուն մեթոդները թույլ տվեցին համակողմանիորեն ուսումնասիրել ուսումնական նյութը, սովորողները ակտիվ համագործակցեցին միմյանց հետ, ունեցան հնարավորություն ինքնուրույն տեղեկատվություն հավաքելու, դասակարգելու և ներկայացնել այն: Կարծում ենք, որ նմանօրինակ դասերն իրապես կարող են ազդել կրթության որակի բարձրացման վրա, իսկ սովորողներն արդյունքում կդառնան առավել ճկուն, շարժուն, կարողունակ և գիտելիքներով զինված:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով սույն հետազոտության մեջ ուսումնասիրված թեմայի նպատակն ու դրանից բխող խնդիրները՝ կատարեցինք հետևյալ եզրահանգումները:

- Հայոց պատմության դասագործընթացին հարկավոր է սովորողների համար ապահովել ինքնուրույն գործելու, նախաձեռնողի դերում հանդես գալու, սեփական կարծիքն ու հիմնավորված փաստարկներն արտահայտելու հնարավորություն: Այսպես սովորողն ավելի է ոգևորվում և հետաքրքրվում առարկայով:
- Մի շարք առանցքային կարողունակությունների զարգացման, սովորողին մնայուն գիտելիքով ապահովելու նկատառումներից ելնելով՝ հարկ է, որ ուսուցիչը վերանայի առարկայի դասավանդման մեթոդական իր զինանոցը՝ նախապատվություն տալով կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթական մոդելին:
- Կրթական արդի բարեփոխումների շրջանակներում կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթությունը, նչպես նաև փոխգործուն մեթոդներով պլանավորված դասագործընթացը մեծապես նպաստում են սովորողների մեջ հետազոտական ու ստեղծագործական ունակություններ զարգացնելուն, մտածողության տարատեսակների ամրակայմանը, դասին մասնակցելիության մակարդակի բարձրացմանը:
- Հայոց պատմության դասավանդման շրջանակներում չափորոշչային պահանջներին համապատասխան պլանավորված, ՏՀՏ գործիքներով, զննական պարագաներով ու դիդակտիկ նյութերով հագեցած, փոխգործուն մեթոդների կիրառությամբ դասագործընթացը ունի բոլոր նախադրյալները կրթության բարձր որակ և սովորողների առաջադիմություն ապահովելու համար:
- Հայոց պատմության դասավանդման ընթացքում ցանկալի է, որ ուսուցիչը զերծ պահի սովորողին մեխանիկական վերարտադրումից. ցանկացած միտք պետք է լինի կշռադատված, օրինակներով ու փաստերով հիմնավորված:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
2. ՀՀԿառավարության՝ 08.04.2010 թվականիթիվ 439-Ն որոշում:
3. https://escs.am/files/files/2020-07-17/a266911a693f809df0b4aa3175b0bcdb.pdf Հանրակրթական «Հայոց պատմություն» առարկայի ուսումնառության հայեցակարգ:
4. Ալեքսանյան Լ.,Թորոսյան Ն.,Պետրոսյան մ.,Ուսուցման ինտերակտիվ մեթոդների տեսությունն ու պրակտիկան, Երևան, 2004:|
5. Հակոբյան Ն., Գևորգյան Ս. և ուրիշներ, Մանկավարժական հաղորդակցում, ուսումնամեթոդական ձեռնարկ, հեղինակային հրատարակություն, Երևան, 2010:
6. Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020:
7. Ստրադլինգ Ռ., «Պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցումը». ուսուցչի ձեռնարկ, Երևան,2008:
8. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, էջ 22: